ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՐԱՄ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ

M. BENIARD
Poste Restante
Athènes (Grèce)

Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար

Իւրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։

ԱՊՏԱԿ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ·
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ· . . . . . 5 ֆրանկ
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· . . . 1/2 „

Ժողովո՛ւրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը։

Ժողովո՛ւրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | ԱԹԵՆՔ | Nr 3 ՄԱՅԻՍ Nr 3 | 1894 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՒԵԼԸ

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԱՇԽԱՏԱՒՈՐԸ ՅԱԽ ԱՒԵԼՈՎ ՄԱՔՐՈՒՄ Է ԻՐ ԵՐԿՐԻ ՀՈՏԱԾ ԱՂԲԸ....

ԱՊՐԵԼԱՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Այդ մի բան է սակայն, որ ամենքը չեն հասկանում։

Այն թշուառ գիւղացին, այն տանջված բանւորը, այն մշակը, բոլորն էլ արեւածագից մինչև մթնակոխը մէջքները ծռած դաշտի ծանր աշխատանքի տակ, կամ գործարանի ու արհեստանոցի աշխատանքից կմախքացած, կամ համեստ (սեմերի) տակ անասնի պէս բեռցված, անընդհատ աշխատում են, դրանք, որ կերակրում, հագցնում, ապրեցնում են ամենքին, շինում ճանապարհներ, կտրում լեռներ ու ձորեր, կառուցանում տներ, շէնքեր, պալատներ,—այդ ամբողջ ահագին բազմութիւնից սակայն, որ աշխատաւոր է կոչվում, ամեն-մի քայլափոխում խլում են ապրելու իրաւունքը։ Մարդկութեան այդ ամենամեծ մասը կազմող աշխատաւոր բազմութեան ասում են նրանք, որոնց համար սովորական է դրամի փայլը և կարոտութիւնը չը գիտեն ինչ է,—ասում են.—«ապրիր խաղաղութեամբ. ապրելուդ արգելք դնող չը կայ»։

Օ՜, զզուելի հեգնութիւն։ Հարկեր բարդել պարտքի մէջ խրել, վաստակը խլել, կայքը, հողը յափշտակել, միսն ու մկանունքը հալել, արիւնը քամել—և այդ կերպով աշխատաւոր բազմութեանը շահագործել, նրա աշխատանքն իւրացնել և նրան պահել այդ անասնական վիճակում այսօր, ինչպէս երէկ էր, և վաղն, ինչպէս այսօր է, և ապա դառնալ ու ասել.—«ապրիր խաղաղութեամբ. ապրելուդ արգելք դնող չը կայ»... Զայրացուցիչ ցինիզմ, լրբութիւն. անամօթ չարագործութիւն, որ օրինական է դարձել...

Եւ սակայն այդ է ժողովրդի ներկայ կեանքը։ Եւ քիչերը, մի բուռ ունեւորներ ու մեծերը և դրանց շահերը պաշտպանող կառավարութիւնը այդ կեանքից օգտվում են չարաչար, անխիղճ կերպով շահագործում, բազմութեան աշխատանքով դիզում իրանց համար հարստութիւն, ձեռք բերում ամեն առանձնաշնորհում, իրանք իրանց շահերի ու կամքի համաձայն օրէնքներ հնարում, ուսում ու դիտութիւն ստանում, որի միջոցով, փոխարէն թշուառ ժողովրդի վիճակը բարելաւելու, նորանոր փանդեր, հնարքներ են յօրինում նրան աւելի ճնշելու համար.... Եւ յետոյ... յետոյ զբօսանքներ, քէֆեր, անհոգ ու լիառատ ապրուստ, մի զեղխ, շռայլ ծոյլ կեանք, որ վայելում են այդ մի բուռ մարդիկը, այն ունեւոր, ուտող, աշխատանք չը գործադրող փոքրամասնութիւնը....

Այսպէս, մարդկութեան ամենամեծ մասը միշտ աշխատում է, և առաջին օրից սկսած մինչեւ իր կեանքի վախճանը շարունակ կամաց-կամաց մահանում, կարծես այդ լինէր նրա միակ կոչումը, մինչդեռ նա, որ չէ աշխատում, այլ միայն շահագործում է ուրիշների աշխատանքը, վայելում է ամեն բան, ինչ ուզէ, և միշտ ծաղկում։ Այո՛, և աշխատաւոր բազմութեան անհատներն այսօր ծնվում են ոչ թէ ապրելու, այլ մեռնելու համար, իսկ ունեւոր փոքրամասնութեան անդամները ծնվում են ապրելու և բացառապէս վայելելու համար։ Ո՞ւր է, հետեւաբար, աշխատաւորի ապրելու իրաւունքը։

Ահա թէ ինչ անբնական, անճոռնի հակասութիւն մարդկութեան անդամների մէջ, որոնք ամենքն էլ բնականից միեւնոյնն են ու հաւասար միմեանց։

Եւ դեռ ասում, կրկնում ու պոռում են, թէ արգելք դնող չը կայ աշխատաւորի ապրելու իրաւունքին....

Այդ բնական, այդ առաջին ու անձեռնմխելի իրաւունքն այսօր աշխատաւոր բազմութիւնը չունի։ Բայց վաղը նա այն պէտք է ունենայ եւ կունենայ։

ՄԵԶ ԿԸ ԿԱՌԱՎԱՐԵՆ

Ժողովրդի մէջ աշ տուն չէ մնացեր,
Որ դառն չողբայ իր անվերջ ցաւեր։
Արհեստաւորն ու խեղճ գիւղացին
Ամենի ձեռքով միշտ կը կեղեքուին։
Կեանքերնին եղած քրտինք ու արիւն,
Չեն տեսած խնդում, բաղդաւորութիւն։
Ասանկ հիքմէթ մի ունինք անօրէն.
Անշուշտ, այդ կերպով կը կառավարեն։

„Ամիտիէներ“, քիւրդերու բէկեր,
Գազան զապթիէ, լիրբ պաշտօնեաներ,
Հայ վաշխառուն ալ, հայ պարտատէրն ալ
Կը պղծեն մեր կին, աղջիկ, տղան ալ,
Այս մէկ՝ փախցնելով, այն մէկ՝ բռնութեամբ,
Այս մէկ՝ պարտքին տեղ, այն մէկ՝ շընութեամբ,
Ամենիս ալ միշտ մինչ մահ կը ծեծեն...
Այդպէս է, որ մեզ կը կառավարեն։

Ալ վերկի ըսես — մեր մէջք կոտրեց աւ,
Կտոր հացն ու աղը եղաւ մեզի ցաւ։
Մեր հողեր մեզմէ կառնեն, կը խլեն,
Մեր արտ ու բաղեր քար-քանդ կաւերեն,
Գաղթել ուրիշ տեղ հիմակ չեն թողուր
Եւ կընեն մեզի իրենց քիմքին կուր։
Այդ է մեր բարի հիքմէթին ադաթ.
Կը կառավարեն — ինչ կողբաս վըրադ...

Պաղեցաւ մեր մէջ մեր սիրտ, մեր արիւն.
Մենք լուռ կաշխատինք առտուանց՝ իրիկուն.
Արցունք-քրտինքով երկիրն կը լեցնենք,
Քիչերուններուն զեղխ կեանքը կը սնուցենք
Մենք, աշխատաւորքս միլիոնաւոր,
Որ կեանքի ջաղացքն կշրջենք ամեն օր։
Կը կառավարեն— միշտ դու աշխատէ՝
Հիքմէթը լափէ, կեղեքիչն ուտէ։

Խօսք մ՚ալ չեն թողուր մեզի, որ ըսենք,
Մեր ցաւ ու հոգսին դարման մը գտնենք.
Լեզուընիս դաղեն տաքցած շամփուրով,
Ծառէն կը կախեն, խիստ մըտրակելով...
Անարգանք մընաց, որ մենք չը տանինք,

ՉԻՐԻՆ ԱԼԻ

ԵՒ ԻՐ ՍՊԱՆՈՂԸ

Ցեղափոխական կեանքից

Սեւ Ծովի հարաւային ափերի վրայ ձգվում է լեռների մի երկար շղթայ, որ սկսելով Տրապիզոնի մօտ Լազիստանի կողմերից, տարածվում է դէպ պի արեւմուտք և մօտենում Բոսֆորի հարաւային եզերքին։ Ուղտի կարաւանների նման իրար ետեւից շարված լեռներով՝ նա մէկ ցած անում է և ահագին անդունդներ, խոր կիրճեր կազմում, մէկ էլ բարձրանում է և իր անտառուտ գլուխը զովացնում ձիւնային սառ մթնոլորտում։ Սգաբրիա, Գըզըլ-Ըրմագ, Եէշիլ-Ըրմագ գետերը, միանալով ուրիշ շատ գետակների հետ, ճեղքել են այդ լեռնաշղթայի սեպաձեւ, քարուտ կուրծքը և դարերի ընթացքում իրանց համար բաց են արել ոլոր-մոլոր ճամբաներ։ Պոնտոսի այդ նշանաւոր շղթան նահապետական դարերից սկսած մինչեւ այս օրս էլ իր ծոցում պահել է քաջ հերոսների ցեղերը, որոնք մինչեւ վերջ անընկճելի են մնացել բռնապետական անարգլուծից։ Անտառը հիւրասիրել է իր քաջ զաւակներին, տվել է իր բնական անմատչելի պատսպարանը, սնուցել է նրանց իր երեսներով (վայրի որսի կենդանիներ), իր պտուղներով և զովացրել է նրանց այրած սրտերն իր սառն աղբիւրների վճիտ ջրերով։

***

188*ին ամբողջ Ջանիկի սանջակը սարսափի մէջ էր։ Դեռ նոր էր ազատվել նա Ղարա-Զօլուկ յոյն աւազակապետի ասպատակութիւններից, երբ Երեւան եկաւ աւելի ահարկու մի հրոսակ, հինգ ընկերներով, որոնցից շատերը լաղ, և խափանեց գլխաւոր ճամբաների անցքերը։ Ճամբորդները սարսափից դողում էին։ Վաճառականութիւնը մեծ հարուած էր ստացել։ Շիրին Ալին — այդ էր նշանաւոր ասպատակի անունը— կտրել էր Փոքր Հայքի ապրանքների փոխադրութեան միակ դուռը եղող ճանապարհը։ Նա մէկ երեւում էր Ղարա-Դաղի խոր, անտառուտ ձորերում, մէկ էլ ձայն էր տալիս Զագալը բարձր լեռան խիտ մացառներով ծածկված գագաթից։ Կառավարութեան բոլոր ձեռնարկները, ծախսերը պարապ տեղն էին վատնվում։ Շիրին Ալին անձեռնմխելի էր դարձել սպանել էր զինուորներ, ոստիկաններ և լքցրել էր այդ պաշտօններն ունեցող բոլորի սիրտն ահ ու սարսափով։ Թիւրք կառավարութիւնը խոստացել էր մեծ պարգեւ Շիրին-Ալին սպանողին։ Կազմվել էին կամաւորների խմբեր և հալածել նրան, բայց միշտ վնասվել, վիրաւորվել, սպանվել էին եւ յուսահատ իրանց տեղերը դարձել։ Շիրին-Ալիի գնդակը երբէք վրիպել չը գիտէր. նա վայր էր գցում հեռաւոր կէտի վրայ դրված հազիւ նշմարելի հաւկիթն անգամ։ Նրա հալածողները քաշվելով ասպարէզից, ամբողջ Ջանիկը բաց էին թողել նրա առջեւ, այնպէս որ այդ համարձակ աւազակի յանդգնութիւնը ծայրայեղութեան էր հասել։ Գուրշունլուի, Գաբու-Գաեաի եւ Էյրի Դէրէի ամբողջ հայաբնակ գիւղերը մատնվել էին մի ծանր դրութեան. ինչ որ մնացել էր պեսական աւազակների կողոպտածից, այն էլ յարձակումներով կողոպտել էր Շիրին-Ալին։

Գիւղերում դեռ պահպանվել է նահապետական հին դրութիւնը. ցերեկուայ չարաչար աշխատութիւնից յոգնած՝ նրանք ժողովվում են գիւղի մեծի, քահեայի կամ ամենից հարստի տունը, գեղջկական պարզ խել քով խօսում են օրուայ խնդիրների վրայ, քննադատում և միշտ միեւնոյն եզրակացութեան գալիս։— „երկնուց է, օրդի“, — ասում են ամենածերերը. — „վախտը (ժամանակ) գիշացեր է, մարդիկ սատանայացեր են, անոնք մոռացեր են իրենց Ստեղծողին, նա էլ բարկացած կը պատժէ մեզ...“ Խոր ախ-եր են քաշում և մէկ ինչ-որ անորոշ աղօթք մրմնջելով իրանց քթի տակ, խաչակնվում են եւ խօսքերով սատանային հալածում։

***

Գարնան սկիզբներն էր։ Բնութիւնն արթնացել էր իր խոր քնից։ Անտառի վիթխարի ծառերը հագել էին ամենափայլուն կանաչ զգեստ։ Նրանց մէջ տեղ-տեղ վայրի պտղատու ծառերը

Ալ հոգի մըմ մեզի, որ ապրինք...
 Դարերէ ի վեր այդպէս ըրեր են....
 Անանկ չէ՞, չէ՞ մի կը կառավարեն:

Որ մ՚ալ մեր մէջէն կտրիճներ ելան,
Քաղաքին մարդկանց հետ սուս խօսեցան.
Հըրացան առին իրենց ուսերուն,
Որոտ հանեցին ի մէջ լեռներուն,
Մեր ամենիս ալ սրտեր կրակեցին,
Ըսինք — հասած է դատաստան վերջին:
 Քանի որ մեզի անանկ՝ որ գիտենք՝
 Կը կառավարեն — ալ ինչ պիտ ընենք:

„Փողովուրդըն իր բարին կը ցանկայ...
„Ա՛յ շուն. կոտորէ՛ք, որ հայ մ՚ալ չը մնայ“ —
Անանկ կատղեցան հիքմէթ, կեղեքիչ,
Բանտ ու աքսորներ դըրին շատ կտրիճ,
Ֆէլախկա, ծեծ, քաղց, ամօթ, ինչ տանջանքներ
Ըսես, որ չըրին մեր գլխուն վատեր:
 Այդ կը պահանջէ հիքմէթի բարին.
 Կը կառավարեն — վա՜յը քո գլխին:

Կարմիր ներկվեցան դաշտեր ու գիւղեր,
Կարմիր ներկվեցան հայոց դիակներ,
Կախաղան տարին... կարմիր օրն հասաւ...
Կարմիր դրօշակը փռփռաց, բացուաւ...
Մեզ կոտորելու եօքն ելաւ հիքմէթ,
Որու հետ ըսեմ — մեր ջօջերու հետ...
 Ադոնց շահերը մեր շահին դէմ են —
 Հիքմէթին հետ մեզ կը կառավարեն:

Մենք չուզենք ալ, որ մեզ կառավարեն,
Զուզենք ալ, որ մեր աշխատանք լափեն:
Մարդ մարդու չը՛ պիտ բնաւ կառավարէ.
Անխօս ու անբան անասուն նա չէ:
Ըլլա՛նք մենք մեզի մեր տէր հաւասար,
Մէկտեղ մեր գործեր միշտ վարենք արդար:
 Ձի ըսածիս պէս կը կառավարեն,
 Կառապան-հիքմէթք տղրուկ, անօրէն:

19 Մայիս, 94. ԽԵՆԹԸ.

ԻՄ ՊԱՐԿԻՑ

Ազատութեան հասնելու ճանապարհը Մուհամմէտի ասեղի ծակն է, որի միջով անցնելիս, ասիական մարգարէի ասած ա գ օ գ-մ ա գ օ գ

մանրամարդ ցեղի նման՝ յեղափոխականները պէտք է բացականչեն. — „փա՛ռք Աստուծոյ, այս ինչ լայն ճանապարհ է եղել“:

***

Հայերիս մէջ երեք կարգի յեղափոխականներ կան: Առաջին կարգը՝ յեղափոխական, որ գործում են. երկրորդը՝ յեՋափոխական, որ յեղափոխութիւն պոռալով հանդերձ, գործից խուսափում են... հեզութեամբ. երրորդը՝ յեղափՄխական, որոնց յեղափոխութիւնը պէտք է դուրս փսխէ....

***

Ազատութիւնը նպատակ չէ, այլ անհրաժեշտ միջոց է մարդկութեան բարեկեցութեան համար:

***

Որ և է նիւթի ո ւ ղ ի ղ քննութիւնն ուղիղ ճանապարհով չէ գնում, այլ ծուռումուռ. նա թափանցում է նիւթի խորը, որոշում նրա արտաքինը, դիտում նրան ամեն կողմից և ապա տալիս նիւթի մասին ո ւ ղ ի ղ եզրակացութիւն:

***

Եթէ հաւատալու լինես այն ամենն, ինչ որ հայկական մի կարգ մամուլը գրում է միշտ, քո գանգը կը լցվէ մի շարք մէկը միւսից տխմար ստութիւններով, մէկը միւսից անճոռնի զրպարտութիւններով, մէկը միւսից սխալ կամ շինծու հայեացքներով, և ճակատիդ վրայ իրաւամբ կարձանագրեն — ա ղ բ ի ա ր կ ղ:

***

Արեան մէջ է ծնվում մանուկը. արեան մէջ է ծնվում հասարակական նոր վիճակը:

***

Հասարակական կեանքի ողբերգութեան մէջ գլխաւոր դերեր կատարողները միշտ ազնիւները չեն. բայց պատմութեան փառաւոր էջերը գրաւողները միայն ազնիւներն են:

***

Բարձր ձգտումներից առաջացած յեղափոխութիւնը մի բաղնիք է, որի միջից հասարակութիւնները դուրս են գալիս բարոյապէս, մտաւորապէս ու կենսականապէս մաքրված:

***

Ով ասում է ազատութիւն, ասում է սէր. ով ասում է սէր, ասում է զոհողութիւն:

***

Ժողովուրդը ո՛չ հովւի պէտք ունի և ո՛չ խընամակալի պէտք ունի. իր ազատ կամքով պէտք է ինքն իրան կառավարէ:

***

Անհատին չէ, որ պէտք է հետեւել, այլ գաղափարին:

«ԱՊՏԱԿԻ» ԼՐԱԲԵՐԸ

Մաքսուտ Սիմոն պէյ նշանաւոր հայատեացին վրայ Կ. Պոլիս սպանութեան փորձ մը ըրին և վիրաւորեցին զանի: Ատոր վրայ Աշըգեան մօլլան խիստ փորհարութիւն մըն է ստացեր, որ շուտ-շուտ կը կրկնի: Բժիշկները կուգան կերթան... Շէյխին վիճակն անյուսալի է, կըսեն. քօլերայի կերպարանք մը կառնու նորա փորհարութիւնը և պիտի վարակէ վատահամբաւ ազգայիններն ու հարուստները: Տեսնանք:

— 0 —

Ամենայն Հայոց կաթողիկոսը, գտնելով, որ իր „հոգեւոր եղբայր„ Յարութիւնը — Երուսաղէմի պատրիարքին համար կասենք, որ Կ. Պօլսոյ ալ տխրահռչակ ու ազգամնաս պատրիարք կը կոչուէր — եղբայր Յարութիւնն, ասինք, որ Երուսաղէմի վանքի ազգէն կորզած անթիւ ոսկիների մէջ խեղդուելով և փառաւոր ճաշեր ուտելով, իր վանականների հետ ճգնաւորի կեանք կը վարէ և անօթի կը մնայ, — յօգուտ անոր հազարաւոր բուբլիների հանգանակութիւն մը անել տուած է կովկասի մէջ: Միւս կողմէն դարձեալ ամենայն Հայոց կաթողիկոսը, որին Հայաստանցին Հայրիկ անունը տուած է, կը գտնէ, որ սովէն կովկաս գաղթած 8000 Հայաստանցի սովեալները „խալթ կընեն„, փորերնին կուշտ է, վիճակնին ալ աղէկ, և այդ պատճառով անոնցմէ միայն մէկ-երկու հազարին մէկ-մէկ րուբլի շ ն ո ր հ ա ծ է առատաբար ու ազգասիրաբար հասարակութեան քսակէն: Եւ, փառք Աստուծոյ, Երուսաղէմի ճգնաւոր Յարութիւնն աղէկ մը գիրցած է, իր ոսկիները եւ գինիի շիշերը կը համրէ, կը զմայլի սուլթանէն վերջերս իր ստացած փառաւոր շքանշանին վրայ և ջերմեռանդաբար ու ազգասիրաբար Աստծուն կաղօթէ միշտ հայ ազգին համար և ատոր կենացը կը կոնծէ.... Իսկ սովեալներն անդին ճանճերի պէս կը մեռնին և բաց երկնքի տակ իրենց հառաչներն

ծաղկել էին իւրաքանչիւրն իրան յատուկ գոյնով և միօրինակ կանաչութեան տվել էին ամենահրաշալի մի տեսարան. Նրանք գրաւում էին անցորդներին: Հիւսիսի թեթեւ քամին շոյում էր նրանց, ամենաքնքոյշ կերպով շարժում նրանց կանաչ փայլուն գիսակները և կարծես կատակներ անում:

Դաշկազարդի կիրակին էր: „Խաչ“ ի մէջ (եկեղեցի) քարոզ պէտք է խօսէր տեղի քահանայ, երեք օխա բանօթի քիթը քաշող Տ-Դաւիթը. իսկ գիւղացիները պէտք է ժողով կազմէին խորհելու իրանց ներկայ վիճակի վրայ: Անտառի խորքերում, միմեանցից շատ հեռու-հեռու ցըրված տներից դուրս էին գալիս գունատ, դալկահար դէմքեր, տղամարդ, կին և շտապում էին խ ա չ, որը լցվել էր երկու սեւի ստուար բազմութեամբ: Տէր Դաւիթը ոգեւորված քարոզ էր տալիս. այդ հին երկաթագործը աշխատում էր իր խօսքերին մի աստուածաբանական ձեւ տալ. և ինչ հին ու նոր բառեր որ գտնում էր՝ դուրս էր շպրտում եւ աղերսալի խօսքերով ժողովրդին հրաւիրում երկիւղածութեան և մեղայի: „Շիրին-Ալին, ասում էր նա, մեր մեղացը պտուղն է, պէտք է որ քաղենք.“ և իր խօսքերին աւելի հաստատութիւն տալու համար, իբր խոշոր փաստ, մէջ էր բերում այս-ինչ ու այն-ինչ պառաւի աննպաստ երազները: Նա դիմում էր Աստծուն իրան յանձնած հօտին՝ ութ օր հսկում կատարելու, մատաղներ մորթելու և իրանց կրօնաւորին վճարելու տ ո ւ ր ք ե ր ը: Նարեկից հատուածներ էր կարդում, թարգմանում և նեղը մնացած ժամանակ մօրուքն էր քորում և հազում: Ժողովուրդը լուռ երկիւղածութեամբ լըսում էր նրան և ամեն անգամ, երբ Քրիստոսի անունն էր տրվում, խաչակնքում էր և ամենքը միասին ահագին աղմկով „մեղայ“ էին գոչում:

Եկեղեցին աւարտել էր: Ժողովուրդը ծաղկազարդ գետնին վրայ նստոտած, գիւղական սովորութեան համեմատ ուտում էր բերած նախաճաշը: Նրանք թէ ուտում էին, թէ խօսում: Նըրանց խօսքն առհասարակ օրւայ հերոսի մասին էր. ամենքի բերանից Շիրին-Ալի անունն էր լըսվում, թէ ինչպէս նա պառկեցրել էր Պօզ (չէկ) Մարգարի գոմէշին, նրանից ողջ-ողջ պոկել էր մի զոյգ տրեխի համար կաշի և մի քիչ էլ միս ու հեռացել: Նրանք մխիթարում էին Պօզ-Մարգարին և նրա կնկան, որ լաց էր լինում և անիծում այն ձեռքը, որն անխղճաբար զրկել էր իր հինգ պստիկներին մի քիչ կաթ ունենալուց սեւ միսիրի (եգիպտացորեն) հացի հետ: Գիւղի վարժապետ Թաթոսը պտտում էր դէս ու դէն եւ լուռ ականջ էր դնում նրանց հառաչանքներին, գանգատներին: Նա նշմարեց կապետին (կարապետ), որը նոյնպէս տխուր ման էր գալիս: Թաթոսը մօտեցաւ նրան և ցածր ձայնով հարցրեց.

— Կապետ, ինչպէ՞ս էր Տէր Դաւիթի քարոզը:

— Սատանան տանի էն տեսակ քարոզին, ասաց կապետը դժգոհ ձայնով և գլուխը շարժելով. — ամեն կողմ աւազակներով լիքն է. հիքմէթը (կառավարութիւն) մեզ կողոպտում է իր հազար տեսակ վերգիններով (տուրքերով), բէկն ուտելիք չէ թողել մեզ մօտ, տարել է մեր կթանները (այն անասունները, որ կաթ են տալիս) եւ կէս գինով ծախել: Եւ Շիրին-Ալին ահա ութ-ինն ամիս է, որ բոլորովին մերկացրեց մեզ: Սըրանք, տէրաներն (տէր հայր) էլ ուզում են խաչի (եկեղեցու) մէջ կողոպտել. ախըր էսպէս ապրիլ կըլլի. լաւ էր որ մեռնէինք:

— Ինչո՞վ են նրանք մեղաւոր, կապետ, ասաց Թաթոսը. հէնց մենք ենք, որ կողոպտում ենք մեզ:

— Ինչպէ՞ս կարող ենք կողոպտել ինքներս մեզ, ասաց կապետը թերահաւատ շեշտով. ախըր գիժ Մատոն էլ չի անում էդ բանը:

— Ճիշդն եմ ասում, կապետ, հառաչելով յարեց Թաթոսը. տես, թէ ինչ եմ ուզում ասել, երբ ասում եմ մենք ենք մեր թշնամին:

Թաթոսը քայլ արաւ դէպի մի կողմ և առաջացաւ կապետը հետեւեց նրան. երկուսն էլ լուռ գընալով, առանձնացան անտառում մի հսկայ չինարի ծառի ստուերի տակ: Թաթոսը ուսում առած մարդ էր. նա աւարտել էր կօլէջը հետաքրքրվել էր մանաւանդ գիւղացիների կեանքով, որի ճըշմարիտ զաւակն էր եւ ինքը: Նա տեսնում էր նրանց աստիճանաբար անկումը, նրանց անտեսական յոռի կացութիւնն ու քայքայվելը:

Նա վառեց մի ծխախոտ, դուրս փչեց նրա կծու ծուխը, դուրս թողնելով նրա հետ և մի խոր հառաչանք....

(Կը շարունակվէ) ԱԽԲԱՐ—ՌԱՄԻԿ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕԳՆՈՒՄ Է ՍՈՎԵԱԼՆԵՐԻՆ· · · · · ՄԻ—ՄԻ ԿՕՊԷԿ ՏԱԼՈՎ. . . .

ու աղաղակները կարձակեն. . . . .

— 0 —

Արշէն երէց մը Էջմիածնայ "Արարատին" մէջ քարոզ մը գրած է, որի մէջ կասէ, թէ ժողովուրդը տգէտ քահանայ կուզէ եղեր,—իբր ուսումնական քահանայ շատ ունի, որ հիմա նոցա առաստաղենէն վախցած ըլլար։—Արշէն երէցն ալ ժողովրդին այդ "ուզածը" շատ հաւնած կերեւի, որովհետեւ կը թուի թէ ժողովրդին "ուզածն" ալ իրեն Արշէն երէցին նմաններն են։ Այդ գրուած քարոզին վրայ մեր լրագիրների ջերմուկներն ըսկըսան եռալ, փրփռալ, եւ այս մէկը կասէ՝ ժողովուրդն "ուսումնական" քահանայ կուզէ, այն մէկը կասէ՝ "տգէտը" կուզէ. . . Ասոր տակէն, հարկաւ, բան մը չելլեր. . . եւ եթէ տգէտ քահանաների ամենն ալ ուսումնականի փոխելու ըլլանք նէ, հապա այնուհետեւ տգէտ քահանայէն օգուտ քաղողներն ինչ պիտի անեն. . . Եւ բան մ'ալ կայ. մինչեւ որ այդ փոփոխութիւնը կատարուելու ըլլայ՝ սերունդներ սերունդների ետեւէն կուգան, կանցնին եւ կը հասնի օր մը, երբ քահանայ ինչ է՝ հասկցող չըլլար։ Իսկ հիմա ինձ կը թուի, որ եթէ իրմէն ժողովրդէն հարցնելու ըլլանք, նորա ճիշդ գաղափարն է, թէ տգէտ քահանայէն ալ վաղ անցայ, ուսումնականէն ալ։

— 0 —

Տեղ մը ատենախօսութիւն մը ըրաւ մէկը։ Ատենախօսութեան մէջ նա մեր ազգային ջոջերի եւ մասնաւորապէս մեր կաթողիկոսի մասին քանի մը քննադատութիւններ կընէր, փաստերի վրայ յենլով։ Ոմանք (այժմ միայն ոմանք. կար ժամանակ, ենք՝ ամենք) սկսան պոռալ վրան, թէ ինչ իրաւունքով հայրիկի վրայ "կը յարձակի"։ Ասոր վրայ ատենախօսն իրենց ասաց այսպէս.— "Հայրիկը մարդ չէ՞, մահկանացու չէ՞"։ Ըսին՝ շատ աղէկ։—"Հայրիկն ազգիս պաշտօնեան չէ՞"։ Ըսին՝ շատ աղէկ։—"Ազգը չէ՞, որ Հայրիկը կաթողիկոս դարձուց"։ Ըսին՝ շատ աղէկ։—"Ուրեմն Հայրիկն ազգին մի պաշտօնակատարն է, ազգին պիտի ծառայէ եւ Հայրիկը պիտի ըլլայ ազգին համար, ոչ թէ ազգը՝ Հայրիկին համար"։ Նորէն ըսին՝ շատ աղէկ։—"Ուրեմն Հայրիկին բռնած սխալ ընթացքը, վնասակար մի գործը, անաղի մի քարոզը քննելու եւ քննադատելու իրաւունքը կը պատկանի ազգին, որ անորմէ ալ աւելի բարձր է, անորմէ ալ աւելի սիրելի է, եւ ինչ ազգին շահին հակառակ ըլլայ՝ քննադատելի, հարուածելի է միշտ։ Ազգին այդ սուրբ իրաւունքն ինչո՞ւ կուզէք խլել, ինչո՞ւ կը բռնանաք անոր կամքին վրայ. . . ."—Ատենախօսին այդ համարձակ խօսքերին վրայ Արկադեան սոխակ բոլոր Երկայնականջեանները, պատսխանելիք չը գտնելով յանկարծ զըռացին իրենց սրտին սիրելի երգը. . .

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄՏՔԵՐ

Գտնել մի դրութիւն, ուր ամեն-մէկ անհատ ամենաքիչ մի ջանքով կարողանար վայելել ամենաբարեկեցիկ մի կեանք։

Բաբեֆ.

*

Հովիւը միշտ կապրէ իր հօտի հաշուին և կառավարութիւնները կառավարվածների հաշուին։

Մերցիա Ս. Բոզէտտի.

*

Հարստութիւնը տխմարութեան անցագիրն է։

Ա. դը Լաբուիս.

*

Կոմունիզմը, սոցիալիզմը, որին այնքան նը-զովում են, հոգուս վրայ ունի մի հմայք, որ չեմ կարող յաղթել։

Հենրիխ Հէյնէ։

*

Երբ փորիս մէջ բան չը կայ, խելքս ունի խիթք (colique)։

Մոնտեն.

*

Նկատված է, որ պատմութեան մէջ ճշմարիտը ու օգտակարը միշտ ընթացել են միասին։

Ակկարիա.

*

Հասարակութիւնը պարտաւոր է կեանքը բարեկեցիկ դարձնել ամենքի համար

Բոսիւէ.

*

Սուրը սրին կը փշսէ, և պատերազմից կը ծագէ սէր։

Պ. Դիւպոն.

*

Սոցիալիստական գաղափարն ամենաուժեղ պայթուցիկից զօրաւոր է։

Գ. Պլեխանով.

*

Ազատութիւն ունենալու համար հարկաւոր է միայն ցանկանալ այն։

Լա Բոէտի.

*

Քանի որ դուք ուրիշ բան չէք անիլ, եթէ ոչ միայն գանգատվիլ երբէք չեն զլխանել ձեզ այն, ինչ ուզում էք։ Այնպէս արէք, որ ձեզնից վախենան։

Հէլվեցիուս.

*

Ընհասարակ սարսափ են զգում բուռն, խիստ (violent) միջոցներից. բայց այդ միջոցները զօրաւոր հոգին է միշտ ընտրում, և հզօր ընաւորութիւնները ծայրայեղութեան մէջ են հանգիստ առնում։

Շանֆոր.

ԱԹԻՆՔ· "ՀՆՁԱԿԻ" ՏՊԱՐԱՆ·

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ „ՀԱՐՅԱՔՆՆՎՈՒՄ Է" ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ·—„ՔԵԶ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ ԱՍԵՍ,—ՊՈՌՈՒՄ Է ՄԻԹԷՍԱՐԲՔԸ—ՈՐ ԴՈՒ ԵՍ ՍՊԱՆԵԼ· · · ՇՈ՞ՒՆ, ԽԸՆԶԸ՞Ր—ԳԵԱՎՈՒՐ, ԱՒԱԶԱ՛Կ, ԱՒԱՆԱ՛Կ"· · · ԶԱՐԿ·